

**«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի**

**Շահառուների խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 1-ին ժամը 15:00-ին կայացած նիստի**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6**

**Նիստին մասնակցում էին Շահառուների խորհրդի անդամներ՝**

<b>Ասատրյան Լիլիթ</b>	«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ
<b>Ենգիբարյան Վիկտոր</b>	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ
<b>Ջադոյան Կարեն</b>	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ
<b>Խաչատրյան Լիա</b>	«Չարգացում և ինտեգրացիա» ՀԿ
<b>Համբարձումյան Սասուն</b>	«Քաղաքացիական ծառայողների ասոցիացիա» ՀԿ
<b>Հովհաննիսյան Միհրան</b>	«Եղվարդ» ՋՕԸ
<b>Մաիլյան Նարինե</b>	«Փոքր և միջին բիզնեսի» հիմնադրամ
<b>Մովսիսյան Կարինե</b>	«Գորիսի Երիտասարդական Միություն» ՀԿ
<b>Միքայելյան Շիրակ</b>	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ
<b>Նազարյան Հազարասյետ</b>	«Եղեգնաձոր» ՋՕԸ
<b>Շահինյան Պողոս</b>	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ
<b>Ռսկանյան Արման</b>	«Տավուշի զարգացման» ՀԿ
<b>Վերանյան Անդրանիկ</b>	«Նոյեմբերյանի համայնքների միություն» ԻԱՄ
<b>Տեր-Հովակիմյան Ալեքսանդր</b>	«Հայաստանի բժիշկ-ուսանողների գիտական ասոցիացիա» ՀԿ
<b>Ղազարյան Տոնակյան</b>	«Շենիկ» ՋՕԸ

**Նիստին մասնակցում էին նաև.**

<b>Արա Հովսեփյան</b>	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրեն
<b>Անահիտ Պետրոսյան</b>	ՀՄՀ-Հայաստանի «Ջրից դեպի շուկա» ծրագրի ղեկավար
<b>Վիկտորյա Գրիգորյան</b>	ՇԽ օգնական, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
<b>Հասմիկ Ասլանյան</b>	«Շողեր» ՀԿ

Նիստին մասնակցում էին նաև ՋԼՄ ներկայացուցիչներ:

Համաձայն ՇԽ նոր կանոնակարգի նիստի նախագահող ընտրվեց ՇԽ անդամ Ա. Տեր-Հովակիմյանը:

Նախագահողը հորդորեց ներկաներին հետևել վարման կարգին հետևյալ հերթականությամբ՝ հարցի ներկայացում, ելույթներ, հարցեր, առաջարկություններ: Նախահագոյն առաջարկեց նաև հաստատել նախօրոք ներկայացված օրակարգը.

<b>N</b>	<b>Սկիզբը</b>	<b>Օրակարգի հարց</b>	<b>Կցվող փաստաթղթեր</b>	<b>Զեկուցող/ պատասխանատու</b>
1.	15:00	ՇԽ արտագնա հանդիպման արդյունքների ամփոփում	<i>Հանդիպման արձանագրության նախնական տարբերակ</i>	<i>ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գ.Գ.Տ Ա. Հովսեփյան, ՇԽ անդամներ</i>
2.	15:30	«Արագ» ՀԿ նախագահ Թ. Աբրահամյանի կողմից ներկայացված նամակի քննարկում և գործողությունների պլանի մշակում	<i>Նամակի պատճեն</i>	

3.	16:00	ՇԽ աշխատանքային պլանի ներկայացում, քննարկում և հաստատում	<i>Աշխատանքային պլանի նախագիծ</i>	<i>ՇԽ աշխատանքային խումբ</i>
4.	17:00	ՇԽ անդամների փոխարինողների ներկայացում և հաստատում՝ համապատասխան ՇԽ կանոնակարգի		<i>ՇԽ անդամներ</i>
5.	17:15	Առաջիկա ԿԽ նիստի օրակարգային հարցերի ներկայացում		<i>ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ԳԳՏ Ա. Հովսեփյան</i>
6.	17:30	Այլ հարցեր ա) Շահերի բախման հանձնախմբի ստեղծում բ) Էթիկայի հարցերով հանձնախմբի ստեղծում գ) ԿԽ բնապահպանական դիտորդի ընտրության կազմակերպման հարցեր		

Օրակարգի վերաբերյալ ներկայացվեցին հետևյալ առաջարկությունները.

ՇԽ անդամ Վ. Ենգիբարյանի առաջարկեց օրակարգի 6-րդ, այլ հարցերում ներառված ա և բ կետերը դարձնել հիմնական հարցեր՝ հաշվի առնելով դրանց կարևորությունը:

ՇԽ անդամ Ա. Ոսկանյանի առաջարկեց օրակարգի այլ հարցերում ներառել ՀՄՀ-Հայաստանի այցելությունը Տավուշի մարզ:

ՇԽ անդամ Կ. Զադոյանն առաջարկեց ՇԽ անդամներին տեղավորվել հարցերի քննարկման համար տրամադրված ժամանահատվածում, իսկ այն հարցերը, որոնց քննարկումը կծավալվի տեղավորվել առաջիկա ՇԽ նիստ:

Ի գիտություն ընդունելով վերոնշյալ առաջարկությունները՝ ՇԽ անդամները միաձայն հաստատեցին օրակարգը:

**Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ**

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ ՀՄՀ-Հայաստանի ՊՈԱԿ-ի ԳԳՏ Ա. Հովսեփյանը: Ա. Հովսեփյանը բարձր գնահատեց ՇԽ արտագնա աշխատանքային հանդիպման արդյունավետությունը և խոսեց հանդիպման երկու կարևոր ձեռքբերումների մասին: Մասնավորապես, կարևորեց ծրագրի մանրամասն ներկայացումը ՇԽ անդամներին, առկա խնդիրների և դրանց հնարավոր լուծումների վերհանումը, ծրագրի քաղաքական, տնտեսական և սոցիալական ասպեկտների պարզաբանումը: Իսկ երկրորդը Ա. Հովսեփյանը համարեց ՇԽ կանոնակարգի լրամշակված տարբերակի ընդունումը, որ ուղղված է ՇԽ աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Ա. Հովսեփյանը խոսեց նաև ՀՄՀ-Հայաստանի՝ վերջերս Տավուշի մարզ կատարած այցի մասին և շնորհակալություն հայտնեց ՇԽ անդամներ Ա. Վերանյանին և Ա. Ոսկանյանին՝ հանդիպմանը գործուն օջակցություն և մասնակցություն ցուցաբերելու համար:

ՇԽ արտագա աշխատանքային հանդիպման մասին արտահայտվեցին նաև ՇԽ անդամները, նշվեց հանդիպման բարձր արդյունավետությունը և կարևորությունը:

Այս առիթով հանդես եկավ ՇԽ անդամ Ա. Վերանյանը և առաջարկեց առաջիկայում նման հանդիպումներ անցկացնել նաև այն համայնքներում, որտեղ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ն իրականացնում է ծրագրեր:

## **Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ**

«Արագա» ՀԿ նախագահ Թ. Աբրահամյանի նամակում (նամակը կցվում է) առաջ քաշած խնդիրների և առաջարկությունների վերաբերյալ, մասնավորապես ԱՄՆ դուլարի արժեզրկման և շինանյութերի թանկացման պատճառով ՀՄՀ-Հայաստանի ծավալների կրճատումները լրացնելու նպատակով ՀՄԿ-ից ֆինանսական լրացուցիչ միջոցների ակնկալիքով (ինչպես հարևան Վրաստանում) հանդես գալու ՇԽ նախաձեռնության առաջարկը, եղան մերկաների հետևյալ ելույթները.

Հավասարապես կիսելով նամակում արտահայտված մտահոգությունները՝ ՇԽ անդամներ Վ. Ենգիբարյանը և Կ. Ջաղոյանն առաջարկեցին հանդես գալ նախաձեռնությամբ, որին առաջարկեցին միանալ նաև ՇԽ անդամներին ներկայացնող կազմակերպությունները, ընտրողները և այլ հասարակական կազմակերպություններ, ինչի շնորհիվ հայտարարությունը կարժանանա ավելի մեծ հնչողության և ուշադրության:

ՇԽ անդամ Ա. Ոսկանյանը հանդես եկավ առաջարկով ներկայացնելու նամակի և համապատասխան նախաձեռնության մտահաղացումը ԿԽ քննարկմանը, ինչպես նաև չնշել Վրաստանի փորձը՝ գերծ մնալով քաղաքական մեկնաբանությունները: Կառավարության հետ քննարկումներ անցկացնելու առաջարկությանը կողմ արտահայտվեցին նաև ՇԽ անդամներ Ս. Հովհաննիսյանը և Լ. Ասատրյանը՝ հաշվի առնելով ծրագրի քաղաքական բնույթը: Վերջինս նաև հարց բարձրացրեց, թե արդյոք նախօրոք ստորագրված և որոշված Համաձայնագիրը ենթադրում է ծրագրի ծավալների փոփոխության հնարավորություն: Մինչ նախաձեռնությամբ հանդես գալը Լ. Ասատրյանը հորդորեց ՇԽ անդամներին գտնել հարցի հիմնավորման լրջագույն փաստարկեր:

Վրաստանի օրինակը մեջբերման անհրաժեշտությունը պաշտպանեցին ՇԽ անդամներ Պ. Շահինյանը և Կ. Մովսիսյանը՝ այն համարելով նախադեպ: Պ. Շահինյանը տեղին համարեց նաև հարցի շուրջ հանդիպումների անցկացումը ՀՄԿ Հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ դեսպանի հետ:

ՇԽ անդամ Լ. Խաչատրյանն առաջարկեց ստեղծել ՇԽ ենթահանձնաժողով նամակի հեղինակ Թ. Աբրահամյանի մասնակցությամբ, որը կզբաղվի նամակի կամ այլ փաստաթղթի ձևակերպմամբ:

ՇԽ անդամ Ա. Վերանյանը նշեց, որ նման նախաձեռնություններով հանդես գալը ՇԽ անդամների իրավասությունների շրջանակներում է:

Ներկայացվող նամակն ավելի հիմնավոր և ըստ էության դարձնելու նպատակով, կից ներկայացնել նաև 10-15 բույս տևողությամբ տեսանյութ, որում ներկայացված կլինեն այն նախագծերը, որոնք չեն ընդգրկվել վերջնական ծրագրում՝ միջոցների կրճատման և դուլարի արժեզրկման պատճառով:

Ծրագրի ծավալների կրճատման հետևանքների առիթով արտահայտվեց նաև ՀՄՀ-Հայաստանի տնօրենը և նշեց, որ այդ խնդրով շատ մտահոգված է նաև ՊՈԱԿ-ը, քանի որ միշտ ակնկալել է ծրագրի ամբողջական իրականացումը: Ա. Հովսեփյանը հորդորեց ՇԽ անդամներին Կառավարության միջոցները դիտարկել նաև հնարավոր այլընտրանք ծրագրից դուրս մնացած գործողությունների համար, մտածել այլ դոնորների ներգավման մասին:

Ամփոփելով ներկայացված առաջարկությունները՝ նախագահողն առանձնացրեց հետևյալ խնդիրները, որոնց շուրջ ՇԽ-ը պետք է կայացնի որոշում.

- ինչ դիրքորոշում է ներկայացնում ՇԽ-ը ներկայացված հարցերի շուրջ,
- եթե այո, ինչ ձևաչափով, ում է դիմում և երբ:

Քվեարկության դրվեցին հետևյալ առաջարկությունները՝

- Ուլքե՞ր են համաձայն, որ ՇԽ-ը ցույց տա իր դիրքորոշումը Թ. Աբրահամյանի կողմից ուղարկված նամակում բարձրացված հարցերի վերաբերյալ: Առաջարկությունը հաստատվեց միաձայն (14 կողմ):
- Ձևավորել 3 անդամից բաղկացած կորդինացիոն խումբ, հանձնինս ՇԽ անդամներ Պ. Շահինյանի, Մ. Հովհաննիսյանի և Լ. Խաչատրյանի, որը կուսումնասիրի ցուցանիշները ծրագրի կրճատումների վերաբերյալ և ղեկտեմբեր ամսին գումարվելիք ՇԽ նիստին կներկայացնի առաջիկա քայլերի վերաբերյալ առաջարկությունների փաթեթ: Առաջարկությունը հաստատվեց 14 կողմ, 1 ձեռնպահ (Ա. Վերանյան) և 0 դեմ ձայներով (ՇԽ անդամ Ս. Համբարձումյանը չմասնակցեց քվեարկությանը):

**Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ**

ՇԽ տարեկան աշխատանքային պլանի նախագիծը (կցվում է) ներկայացնելու համար ձայնը տրվեց հանձնախմբի համակարգող Ա. Վերանյանին: Աշխատանքային պլանում ներկայացված էր համապատասխան գործողության անվանումը, ժամանակացույցը և պատասխանատուները:

Գործողությունների ներկայացված պլանի վերաբերյալ հնչեցին մի շարք առաջարկություններ և կարծիքներ:

Նույն հանձնախմբի անդամ Ա. Ոսկանյանն առաջարկեց փաստաթուղթն ընդունել առաջին ընթեցմամբ, շրջանառել այն ՇԽ անդամներին և հնարավորություն տալ ներկայացնելու նոր առաջարկություններ և կարծիքներ:

Ներկայացվեցին նաև առաջարկներ նախագծում տեղ գտած առանձին կետերի վերաբերյալ, մասնավորապես, ՇԽ անդամ Պ. Շահինյանն առաջարկեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի արտագնա հանդիպումները համատեղել ՇԽ անդամների կողմից կազմակերպվելիք հանդիպումների հետ, ինչը հնարավորություն կտա խնայել ռեսուրսներ: Պ. Շահինյանն առաջարկեց նաև նախագիծն ընդունել որպես ուրվագիծ՝ առանց ժամանակային սահմանափակումների:

ՇԽ անդամ Մ. Հովհաննիսյանն առաջարկեց ՇԽ աշխատանքային պլանում նախատեսել ևս մեկ արտագա հանդիպում, իսկ Տ. Գազարյանի կարծիքով անհրաժեշտ են ավելի հաճախ հանդիպումներ իրականացնող կազմակերպությունների պատասխանատուների հետ:

ՀՄԿ Հայաստանյան ներկայացուցչության ծրագրի համակարգող Է. Պետրոսյանը ողջունեց ՇԽ անդամներին նման կարևոր փաստաթղթի ձևավորման համար, նաև ավելացրեց, որ ՇԽ անդամները կոնկրետ գործողություններ, ներդրում ծրագրին կարող են իրականացնել ըստ իրենց մասնագիտական կարողությունների և փորձառության:

Նախագահող Ա. Տեր-Հովակիմյանը կարծիք հայտնեց, որ ներկայացված փաստաթուղթը շատ ընդհանրացված է և անհրաժեշտություն կա հսակեցնելու նշված գործողությունները, ժամանակացույցը, ինչպես նաև նշել պատասխանատուների անունները: Ա. Տեր-Հովակիմյանն առաջարկեց փաստաթուղթն ընդունել ի գիտություն, առաջարկել ՇԽ անդամներին մեկշաբաթյա ժամանակահատվածում ներկայացնել իրենց լրացումները և կազմել գործողությունների հստակ պլան:

ՇԽ անդամ Կ. Չաղոյանն ասաց, որ կարելի է ներկայացվածը ընդունել որպես հիմք, իսկ մանրամասնորեն գրված պլանի նախագծերը հաստատել ամսական կտվածքով:

Քննարկման արդյունքում քվեարկության դրվեցին հետևյալ առաջարկությունները՝

- Նախագիծն ընդունել որպես ուրվագիծ՝ առանց ժամանակային սահմանափակման (Պ. Շահինյանի առաջարկությամբ): Կողմ՝ 8, դեմ՝ 5 և ձեռնպահ՝ 1:

- Փաստաթուղթն ընդունելի գիտություն, առաջարկել ՇԽ անդամներին մեկշաբաթվա ժամանակահատվածում ներկայացնել իրենց լրացումները (Ա. Տեր-Հովակիմյանի առաջարկությամբ): Կողմ՝ 7, դեմ՝ 2 և ձեռնպահ՝ 4, մեկ ՇԽ անդամ չմասնակցեց քվեարկությանը:

Չայների պարզ մեծամասնությամբ հաստատվեց Պ. Շահինյանի առաջարկությունը:

**Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ**

Նախագահողն առաջարկեց ներկա ՇԽ անդամներին ներկայացնել իրենց փոխարինողներին և հաստատել: Այն անդամներին, ովքեր այդ նիստին պատրաստ չէին ներկայացնելու իրենց հնարավոր փոխարինողներին, նախագահողն առաջարկեց դա անել առաջիկա ՇԽ նիստերի ընթացքում: ՇԽ անդամ Ա. Վերանյանը հիշեցրեց ներկաներին ՇԽ կանոնակարգի շահերի բախման կետերի վերաբերյալ, որոնք տարածվում էին նաև փոխարինողների վրա:

Ստորև ներկայացվում է փոխարինողների կազմը՝

ՇԽ անդամ		Փոխարինողներ
1	Ասատրյան Լիլիթ	Ալինա Քոսյան
2	Ենգիբարյան Վիկտոր	Նորայր Դանիելյան Աննա Եղոյան
3	Զադոյան Կարեն	Արտակ Սարիբեկյան Սյուզաննա Սողոմոնյան
4	Համբարձումյան Սասուն	Լիլիթ Բալայան
5	Հովհաննիսյան Միհրան	Արթուր Մաթևոսյան Աշոտ Հովելյան
6	Ղազարյան Տոնակյան	Սամվել Սարգսյան
7	Մախլյան Նարինե	Կարեն Գալստյան
8	Մովսիսյան Կարինե	Արտաշես Տոլունց Միհրան Մովսիսյան
9	Միքայելյան Շիրակ	Ռուզան Ղազարյան
10	Նազարյան Հազարապետ	Մարտիկ Ռուբենյան Սուրեն Ղախանյան
11	Ոսկանյան Արման	Միքայել Մարտիրոսյան
12	Տեր-Հովակիմյան Ալեքսանդր	Թերեզա Պետրոսյան

ՇԽ անդամները միաձայն հաստատեցին փոխարինողների վերոնշյալ կազմը:

**Օրակարգի հինգերորդ հարցի վերաբերյալ**

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գ.Գ.Տ Արա Հովսեփյանը ներկայացրեց առաջիկա ԿԽ նիստի օրակարգային հարցերը՝

1. ՀՄԿ-ին ներկայացվող 10-րդ Հատկացման հայտի և դրան կցվող ներքոնշյալ փաստաթղթերի քննարկում և հաստատում.  
 ա/ Հատկացման հայտ և Եռամսյակային ֆինանսական հաշվետվություն,  
 բ/ Հատկացման նախապայմանների հաշվետվություն,  
 գ/ Աշխատանքային պլան,  
 դ/ Ամփոփ հաշվետվություն և ցուցանիշների վերահսկման աղյուսակ,  
 ե/ Գնումների կատարման հաշվետվություն և գնումների պլան.  
 զ/ Տարեկան լրացուցիչ հաշվետվություն.

2. «Հագարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում «6 մայր ջրանցքների վերականգնում (Փաթեթ 1)» պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում
3. «Հագարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի վարկային ենթաբաղադրիչի երկրորդ փուլի իրականացման նպատակների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում և «Վարկային ծրագրի վարչական քաղաքականությունը և ընթացակարգերը» ուղեցույցի քննարկում և հաստատում

Ա. Հովսեփյանը նշեց, որ ՀՄՀ-Հայաստանի ամփոփ հաշվետվությունը և ցուցանիշների վերահսկման աղյուսակը, ինչպես նաև տարեկան լրացուցիչ հաշվետվությունը կներկայացվի նաև ՇԽ անդամներին առաջիկա նիստին:

ՇԽ անդամները քննարկում ծավալեցին վերոնշյալ օրակարգի երրորդ հարցի շուրջ: Հնչեցին տարբեր կարծիքներ ՀՄՀ-Հայաստանի վարկային բաղադրիչի վերաբերյալ:

Մեջբերելով մարզերում հատկացվող վարկերի բարձր տոկոսադրույքները՝ ՇԽ անդամ Ա. Վերանյանը արտահայտեց այն կարծիքը, որ ՀՄՀ-Հայաստանի վարկային ծրագիրը կարող է ստեղծել մրցունակության մթնոլորտ գյուղատնտեսական վարկերի բնագավառում:

ՇԽ անդամ Մ. Հովհաննիսյանը հորդորեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին երրորդային ջրանցքների վերականգնումը դարձնել առաջնահերթություն այն պարագայում, եթե կկայացվի որոշում չշարունակել վարկային բաղադրիչը:

Հարցի շուրջ ՇԽ անդամ Ա. Ոսկանյանի արտահայտեց հետևյալ դիրքորոշումները որպես վարկային միջոցների տրամադրման առավել արդյունավետ լուծման տարբերակներ՝

ա. գումարները ֆերմերներին տրամադրել որպես դրամաշնորհ

բ. ՀՄՀ-Հայաստանի միջնորդությամբ ստեղծել խումբ, որը պատասխանատու կլինի այդ գործընթացի համար:

Վարկային բաղադրիչի հետագա գործունեության վերաբերյալ ՇԽ անդամ Վ. Ենգիբարյանի համոզմունքը կայանում էր ֆինանսական հաստատությունների ընտրության մեխանիզմների ճիշտ կիրառման մեջ:

ՇԽ անդամ Տ. Վազարյանը հորդորեց ՇԽ անդամներին չքվեարկել ծրագրի այս կամ այն բաղադրիչի փոփոխության համար, քանի որ ծրագիրը մշտապես դիտարկվել է որպես մի արողություն:

Հ. Նազարյանը նույնպես պաշտպանեց վարկային բաղադրիչը շարունակելու դիրքորոշումը:

Ներկայացված առաջարկությունների վերաբերյալ խոսեց նաև ՀՄՀ-Հայաստանի Ջրից դեպի շուկա բաղադրիչի ղեկավար Ա. Պետրոսյանը. նա նշեց, որ դրամաշնորհների գաղափարը չի խրախուսվում ծրագրի կողմից, առաջարկեց նաև ՇԽ անդամներին չխուսափել բանկերին հզոր և ուժեղ կառույցներ տեսնելու տեսլականից, քանի որ ամուր ֆինանսաբանկային համակարգը ուղղված է երկրի տնտեսության կայացմանը:

Ամփոփելով ներկայացված առաջարկությունները՝ նախագահողն առաջարկեց հարցը դնել քվեարկության հետևյալ ձևակերպմամբ՝

ՇԽ-ը կողմ է վարկային բաղադրիչի աշխատանքերի շարունակմանը՝ նոր բարելավումների կիրառմամբ: Առաջարկությունը հաստատվեց 13 կողմ, 1 դեմ (Մ. Հովհաննիսյան) և 0 ձեռնպահ ձայներով:

Վերջում, ՇԽ անդամ Ա. Ոսկանյանը բարձրացրեց հետևյալ հարցադրումը. դիցուք, ԿԽ առաջիկա նիստի քննարկումներին ՇԽ պատվիրակները գալիս են այն համոզման, որ այնուամենայնիվ, պետք է դադարեցնել վարկային բաղադրիչը, ինչպիսին պետք է լինեն նրանց գործողությունները այն պարագայում, երբ ՇԽ-ը արդեն կայացրել է որոշում:

ՇԽ անդամներն արտահայտեց այն դիրքորոշումը, որ ԿԽ պատվիրակները չպետք է քվեարկեն այլ կերպ, քան ՇԽ որոշումը, որպես այլընտրանքային տարբերակ նշվեց հարցը հետաձգելու առաջարկությունը:

### **Այլ հարցեր**

Հաշվի առնելով այն փաստը, որ ՇԽ նիստին հատկացված ժամանակը ավարտվեց՝ նախագահողն առաջարկեց փակել նիստը, մնացած հարցերն առաջիկա ՇԽ նիստի առաջին հարց տեղափոխելու պայմանով:

*Նախագահող՝*

*Ա. Տեր-Հովակիմյան*

*Քարտուղար՝*

*Վ. Գրիգորյան*

*1-ը դեկտեմբերի, 2008թ.*